«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր

Թիրախային ուղղություններով շահերի պաշտպանության քարոզարշավ իրականացնելու նպատակով ենթադրամաշնորհային հայտերի ներկայացման հրավեր ՔՀԿ-ների (ԶԼՄ-ների) համար

1. «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի մասին

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ը՝ ղեկավար կազմակերպությունը, իր գործընկերներ՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» չեխական ՀԿ-ի հետ համատեղ իրականացնում է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)։

Ծրագիրը մեկնարկել է 2022 թվականի դեկտեմբերի 8-ին և ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից։ Ծրագրի տևողությունը 48 ամիս է։ Ծրագրի **հիմնական նպատակն է** քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին։ **Ծրագրի առանձնահատուկ նպատակն է՝** նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ուժեղացմանը։

2. Ծրագրի ենթադրամաշնորհային բաղադրիչի մասին

Ծրագրի շրջանակներում իրականացված ելակետային հետազոտության[1] արդյունքները փաստում են այն մասին, որ բյուջեի մոնիթորինգային գործընթացում հարցված ՔՀԿ-ների ընդամենը 20%-ն է վերահսկել բյուջեի կատարողականը, մինչդեռ 80%-ը բյուջեի մոնիթորինգ երբևէ չի իրականացրել։ Միևնույն ժամանակ իրականացված մոնիթորինգները հիմնականում եղել են ՏԻՄ մակարդակում։ Բյուջետային գործընթացում հայաստանյան ՔՀԿ-ների կողմից մոնիթորինգի իրականացման ցածր մակարդակը շեշտվել է նաև ճյուղային նախարարությունների ներկայացուցիչների կողմից։ Մասնակցության ցածր մակարդակը արձանագրվել է նաև Բաց բյուջեների հետազոտության շրջանակներում։ Մասնավորապես, ըստ Հայաստանի և այլ երկրների մասնակցության գնահատականի համեմատականի՝ Հայաստանը 2021 թվականին ստացել է 6 միավոր[2], իսկ 2023 թվականին՝ 11[3]։ Իհարկե, 2023 թվականին

---

[1] https://budgets.am/1162.html

[2] https://internationalbudget.org/open-budget-survey/country-results/2021/armenia

[3] https://internationalbudget.org/sites/default/files/country-surveys-pdfs/2023/open-budget-survey-armenia-2023-en.pdf

ստացած միավորը թեև կրկնապատկվել է, սակայն բյուջետային գործընթացի մասնակցության մակարդակը շարունակում է ցածր մնալ Հայաստանում՝ ի տարբերություն այլ երկրների (օրինակ՝ Վրաստանը 2021 և 2023 թթ. ստացել է 44 միավոր)։
Ծրագրի շրջանակներում իրականացված ելակետային հետազոտության արդյունքներով նաև պարզ է դարձել, որ բյուջեի ոլորտում հիմնական հմտությունները, որոնք ՔՀԿ-ները ձգտում են բարելավել, դրանք բյուջեի վերլուծությունն է (83.8%) և բյուջեի տեղեկատվության հասանելիությունն ու օգտագործումը (82.5%), որին հաջորդում են մոնիթորինգը (73.8%) և շահերի պաշտպանությունը (71.3%)։ Հետազոտության շրջանակներում իրականացված ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում մասնակիցների կողմից հնչեցրած առաջարկությունները վերաբերում էին վերլուծական հմտությունների, ինչպես նաև մոնիթորինգի և ջատագովության հմտությունների զարգացման անհրաժեշտությանը։ Ինչ վերաբերում է պարզեցված բյուջեներին, ապա հարցման մասնակցած ՔՀԿ-ների ճնշող մեծամասնությունը (ավելի քան 90%) երբևէ չի մշակել պարզեցված բյուջե։

Հիմնվելով վերը նշված հետազոտության արդյունքում բացահայտված կարիքների վրա, նախորդող ամիսների ընթացքում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար կազմակերպվել է բյուջետային ուսումնական ծրագրի (այսուհետ՝ Դասընթաց) երկու հոսք, որի հիմնական նպատակը հետազոտությամբ բացահայտված կարիքների հասցեագրումն էր։ Կարիքների հասցեագրման նպատակով, ուսումնական թեմաները պատրաստել են Ծրագրի փորձագետները՝ դրանք մշակելով հնարավորինս հանրամատչելի, բովանդակային և հեշտ ընկալելի։ Այս թեմաների վերաբերյալ մասնակիցները հնարավորություն են ստացել նաև առանձին հանդիպումներ ունենալ փորձագետների հետ, և ստանալ խորհրդատվություն և հավելյալ տեղեկություններ վերապատրաստման նյութերի և թեմաների վերաբերյալ։
Ի թիվս այլնի, երկու հոսքերի ՔՀԿ-ները և ԶԼՄ-ները վերապատրաստվել են բյուջետային գործընթացում բյուջեի վերլուծության և մոնիթորինգի իրականացման վերաբերյալ տեսական և պրակտիկ թեմաներով։ Նրանք սովորել են պարզեցված բյուջեներ մշակելու առանձնահատկությունները, ինչպես նաև սովորել և զարգացրել են բյուջեի վերլուծության և մոնիթորինգի ընթացքում հատկորոշած հիմնախնդիրների վերաբերյալ շահերի պաշտպանություն իրականացնելու հմտություններն ու կարողությունները, ներառյալ քաղաքականության փաստարկների կազմում, ռազմավարական հաղորդակցություն, շահագրգիռ կողմերի ներգրավում և արդյունավետ երկխոսությունների վարում որոշում կայացնողների հետ։ Զուգահեռաբար, Ծրագրի շրջանակներում երկու հոսքով վերապատրաստվել են նաև երիտասարդ մասնագետներ։ Առաջին և երկրորդ հոսքերի երիտասարդ մասնագետները հաջողությամբ աշխատանքի են անցել բյուջեի մոնիթորինգի և վերլուծության, ինչպես նաև թիրախային ուղղություններով 1-ին փուլի շահերի պաշտպանության իրականացման ենթադրամաշնորհային ծրագրեր իրականացնող ՔՀԿ-ներում/ԶԼՄ-ներում[4]։ ՔՀԿ-ները/ԶԼՄ-ները, որոնք երկրորդ փուլով արդեն իսկ ստացել են երիտասարդ մասնագետների ներգրավման ենթադրամաշնորհներ, սույն շահերի պաշտպանության մրցույթում հաղթելու դեպքում, կկարողանան շարունակել արդեն իսկ ներգրավված երիտասարդ մասնագետների հետ աշխատանքը։ Միևնույն ժամանակ, այն դիմորդները, որոնք չեն մասնակցել բյուջեի վերլուծության և մոնիթորինգի իրականացման

[4] Սույն հայտարարության շրջանակներում նշված «ՔՀԿ-ներ» և «ԶԼՄ-ներ» հասկացությունների իմաստը ներկայացված է 5-րդ բաժնում, որը վերաբերում է Դիմորդներին/հայտատուներին։

նպատակով նախորդ երկու մրցույթներին, կարող են դիմել սույն շահերի պաշտպանության մրցույթին՝ առանց երիտասարդ մասնագետների բաղադրիչի:

3. Ենթադրամաշնորհային ծրագրի նպատակը և նախընտրելի (թույլատրելի) գործողությունները

Ծրագրի այս փուլում հայտարարվում է **առաջին և երկրորդ Դասընթացը**[5] հաջողությամբ անցած ՔՀԿ-ներին և ԶԼՄ-ներին տրամադրվող երկրորդ ենթադրամաշնորհների մեկնարկը՝ թիրախային ուղղություններով շահերի պաշտպանության քարոզարշավ իրականացնելու նպատակով:

3.1. Ընդհանուր նպատակ.

Ծրագրի թիրախ ոլորտներում բյուջետային գործընթացին առնչվող շահերի պաշտպանության և քաղաքականության երկխոսության իրականացում, ներառյալ՝ պետական բյուջեի վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցությունը պետական մարմինների և ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ:

Ընդհանուր նպատակներից է նաև թիրախային ոլորտների բյուջետային հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության առաջարկների մշակումը և ներկայացումը, ինչպես նաև այդ գործընթացներում հանրային մասնակցության ընդլայնումն ու որոշումների կայացման գործընթացի վրա ազդեցության մեծացումը:

3.2. Թիրախային ոլորտները և ոլորտային ուղղությունները

(1) Արդարադատություն, (2) կրթություն, (3) սոցիալական աջակցություն և (4) գյուղատնտեսություն:

Թիրախային ոլորտների ուղղությունները.

(1) Արդարադատություն

a. Դատական և իրավական, ներառյալ՝ սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության համակարգեր,
b. Մարդու իրավունքներ,
c. Հակակոռուպցիոն,
d. Ոստիկանություն և իրավապահ մարմիններ,
e. Քրեակատարողական և պրոբացիայի համակարգ,
f. Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

[5] https://budgets.am/1596.html https://budgets.am/3291.html

(2) Կրթություն

a. Հանրակրթություն, ներառյալ՝ նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ,
b. Մասնագիտական, ներառյալ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական:

(3) Սոցիալական աջակցություն

a. Ինտեգրված սոցիալական ծառայություններ,
b. Պետական կենսաթոշակային ապահովություն,
c. Սոցիալական աջակցություն,
d. Ժողովրդագրություն
e. Ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանություն,
f. Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական պաշտպանություն,
g. Ապաստան ստացած փախստականների, տեղահանվածների, երկարաժամկետ միգրանտների և հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիների ինտեգրում կամ վերաինտեգրում:

(4) Գյուղատնտեսություն

a. Բուսաբուծություն,
b. Բուսասանիտարիա,
c. Անասնաբուծության,
d. Անասնաբուժություն,
e. Գյուղատնտեսական մթերքի վերամշակում,
f. Պարենային անվտանգություն,
g. Սննդամթերքի անվտանգություն:

3.3. **Ծրագրի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները.**

1. Բյուջետային վերլուծությունների և մոնիթորինգի արդյունքների հիման վրա հատկորոշված հիմնախնդիրների վերաբերյալ շահերի պաշտպանության ռազմավարությունների մշակում և իրականացում:
2. Պետական բյուջեի հայտերի և ծրագրերի վերաբերյալ դիրքորոշումների, առաջարկությունների կամ արդեն իսկ մշակած դիրքորոշումների և առաջարկությունների հիման վրա քաղաքականության փաստաթղթերի մշակում և ներկայացում պետական իրավասու մարմիններին:
3. Պետական մարմինների և ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ հանդիպումների, խորհրդակցությունների և քննարկումների կազմակերպում՝ թիրախային ոլորտների բյուջետային հիմնախնդիրների լուծումների շուրջ:
4. Շահերի պաշտպանության հանրային արշավների կազմակերպում՝ բյուջետային գործընթացում թիրախային փոփոխությունների հասնելու նպատակով:

5. Բյուջետային մշտադիտարկման արդյունքների հիման վրա մշակված առաջարկների ջատագովում և առաջմղում՝ համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:
6. Հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում՝ բյուջետային գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով:
7. Բյուջետային գործընթացում հանրային մասնակցությունը խթանող հանրային ֆորումների, քննարկումների և հարթակների ստեղծում:
8. Մասնակցություն ՀՀ 2027–2029 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) և ՀՀ 2027 թ. պետական բյուջեի նախագծի քննարկման նպատակով ՔՀԿ-ների համար կազմակերպվող հանրային քննարկումներին:
9. Ծրագրի ընթացքում իրականացվող շահերի պաշտպանության արշավների/գործողությունների շրջանակում առնվազն 250 անձի ներգրավում:
10. Դրամաշնորհային ծրագրերից մեկը կարող է ուղղված լինել «Բաց Կառավարման Գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանում բյուջետային գործընթացում մասնակցային մեխանիզմների վերաբերյալ գործողությունների կատարմանը օժանդակելուն (ԲԿԳ-Հայաստան ազգային ծրագրով գործողության առկայության դեպքում):

Ծանոթություն 1. *Վերը թվարկված գործողություններից 1-ինը, 2-րդը, 5-րդը, 7-րդը, 8-րդը և 9-րդը պետք է պարտադիր կարգով նախատեսված լինեն ներկայացված ծրագրերում:*

Ծանոթություն 2. *Վերը թվարկված գործողություններից 1-ինը, 2-րդը և 5-րդը պետք է կատարվեն ծրագրերի իրականացման առաջին երեք ամսիներին:*

Ծանոթություն 3. *Սույն բաժնում թվարկված գործողությունների իրականացման համար հիմք հանդիսացող հիմնախնդիրները պետք է հատկորոշված լինեն կա՛մ Ծրագրի շրջանակներում 2024 և 2025 թվականներին տրամադրված ենթադրամաշնորհային ծրագրերի արդյունքում, կա՛մ համանման այլ ծրագրերի/գործողությունների իրականացման ընթացքում:*

4. Դիմողները/հայտատուները

Ենթադրամաշնորհային ծրագրին կարող են դիմել ՔՀԿ-ները, ԶԼՄ-ները ստորև նշված պայմաններով:

Ենթադրամաշնորհային ծրագրի մրցույթին կարող են դիմել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այն ՔՀԿ-ները և (ԶԼՄ-ները), որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին.

4.1. ՔՀԿ-ների դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ պետական գրանցում)՝ որպես ոչ առևտրային և ոչ պետական/տեղական (համայնքային) կազմակերպություն:

Ծանոթություն 4. *ՔՀԿ-ների առանձնացված ստորաբաժանումները չեն կարող առանձին դիմել ենթադրամաշնորհային ծրագրին:*

4.2. ԶԼՄ-ների դեպքում՝ ստացել են պետական գրանցում՝ որպես ոչ առևտրային կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն, կամ՝ չունեն պետական գրանցում, սակայն ստեղծվել և գործարկվում են պետական գրանցում ունեցող ոչ առևտրային կամ ոչ պետական/տեղական (համայնքային) կազմակերպության կողմից:

Ծանոթություն 5*. Ենթադրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորում ստանալու հավակնություն չեն կարող ունենալ այն ՔՀԿ-ները և ԶԼՄ-ները, որոնք ստեղծվել են պետական, տեղական (համայնքային) կամ առևտրային կազմակերպությունների (մարմինների) կողմից:*

4.3. Ավարտել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների հմտությունների զարգացմանն ուղղված ուսումնական առաջին և երկրորդ ծրագրերը[6]՝ հայտարարությամբ նշված բոլոր պայմաններին համապատասխան և ստացել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի կողմից ուսումնական ծրագիրը ավարտելու հավաստագիրը:

4.4. Հաղթող ճանաչվելու դեպքում ՔՀԿ-ները և ԶԼՄ-ները համաձայնվում են մասնակցել մեկօրյա պարտադիր ուսուցման՝ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի ներկայացուցիչների հետ՝ ենթադրամաշնորհների իրականացման ընթացքի վերաբերյալ փորձագիտական, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ստանալու նպատակով: Կոնսորցիումով դիմելու դեպքում, պարտադիր ուսուցմանը պետք է մասնակցեն կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ՔՀԿ-ը/ԶԼՄ-ը:

Ծանոթություն 6. *Նշված դասընթացին և քննարկմանը մասնակցելուց հրաժարված ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոնսորցիումների հետ ենթադրամաշնորհային համաձայնագիր չի կնքվի:*

4.5. Անմիջական պատասխանատվություն են կրում իրենց ենթադրամաշնորհային ծրագրի նախապատրաստման և ամբողջական իրականացման համար:

4.6. Դրամաշնորհային ծրագիր իրականացնելու դեպքում ՔՀԿ-ները և ԶԼՄ-ները կարող են դիմել ՔՀԿ-ներից և/կամ ԶԼՄ-ներից բաղկացած կոնսորցիումի միջոցով: Համատեղ ներկայացվելիք ենթադրամաշնորհային ծրագրի հայտի դեպքում պետք է սահմանվի համագործակցող կողմերի հարաբերությունները, դրանց միջև պարտականությունների և լիազորությունների բաժանումը, ինչպես նաև կցվեն պարտավորագիր-նամակներ բոլոր համագործակցող կողմերից: Կոնսորցիումի դեպքում առնվազն հիմնական հայտատուն պետք է ավարտած լինի ուսումնական ծրագրի առաջին հոսքը:

[6] https://budgets.am/1596.html https://budgets.am/3291.html

4.7. ԶԼՄ-ների կողմից ներկայացրած ենթադրամաշնորհային ծրագրի դեպքում՝ ծրագրի հիմնական հայտատու պետք է լինի ԶԼՄ կամ կոնսորցիումի անդամներից առնվազն մեկը պետք է լինի ԶԼՄ: Սույն հայտարարության իմաստով ԶԼՄ-ին վերաբերող պահանջները ներկայացված են 4.2 կետում:

Առավելություն է տրվելու այն դիմորդներին, որոնք կդիմեն ՔՀԿ-ներից բաղկացած կոնսորցիումով, որոնց կազմում կլինեն ԶԼՄ-ներ, կամ կդիմեն առանձին ՔՀԿ-ներ, որոնք ծրագրում կներգրավեն լրագրող:

<u>Մեկ ՔՀԿ-ն՝ որպես հիմնական հայտատու և գործընկեր կազմակերպություն, կարող է ընդգրկված լինել միայն մեկ կոնսորցիումում:</u>

5. Բյուջեն և թույլատրելի ծախսերը

Ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ներին տրամադրվելու է մինչև 14 ենթադրամաշնորհ՝ մինչև 2,158,000 (Երկու միլիոն հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամի չափով[7]: Ֆինանսավորվելու են միայն այն գործողությունները, որոնք նշված են սույն հայտարարության 3.3 կետում:
Ենթադրամաշնորհի տրամադրման պաշտոնական ժամկետից առաջ կատարվելիք, ինչպես նաև ենթադրամաշնորհի հետ առնչություն չունեցող ծախսերը չեն ընդունվի: Ի լրումն հիշյալի, հետևյալ գործողությունները համարվում են անընդունելի՝

- գործողություններ, որոնք վերաբերում են միայն կամ հիմնականում անհատական հովանավորությանը՝ սեմինարներին, կոնֆերանսներին և համաժողովներին մասնակցելու համար,
- գործողություններ, որոնք վերաբերում են միայն կամ հիմնականում անհատական կրթաթոշակներին՝ ուսումնառության կամ վերապատրաստման դասընթացների համար,
- գործողություններ, որոնք խտրականություն են ցուցաբերում անհատների կամ մարդկանց խմբերի նկատմամբ՝ հիմնվելով նրանց սեռի, սեռական կողմնորոշման, կրոնական համոզմունքների կամ դրանց բացակայության, կամ էթնիկ ծագման վրա,
- գործողություններ, որոնք աջակցում են քաղաքական կուսակցություններին:

Հետևյալ ծախսերը համարվում են անընդունելի՝

- պարտքեր և պարտքի սպասարկման վճարներ (տոկոսներ),
- կորուստների կամ հնարավոր ապագա պարտավորությունների համար պահուստներ,
- ծախսեր, որոնք հայտարարվել են շահառուի (շահառուների) կողմից և ֆինանսավորվել են մեկ այլ գործողությամբ կամ աշխատանքային ծրագրով, որը ստանում է Եվրոպական Միության դրամաշնորհ (ներառյալ EDF-ի միջոցով),
- հողի կամ շենքերի գնումներ,
- արժույթի փոխանակման կորուստներ,
- վարկ երրորդ անձանց,
- ազգային կառավարման մարմինների անձնակազմի աշխատավարձի ծախսեր:

[7] Ենթադրամաշնորհի բյուջեի չափը կարող է փոխվել՝ ելնելով արտարժույթի փոխանակման փոխարժեքից:

Ենթադրամաշնորհ ստացողի կողմից բյուջեի ծախսային հոդվածների գումարներում կատարվող փոփոխությունների հանրագումարը չպետք է գերազանցի ընդհանուր բյուջեի տասը տոկոսը (10%), որի մասին նախապես գրավոր կարգով պետք է տեղեկացվի Ծրագրի/Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ) պատասխանատու անձը և ստացվի նրա գրավոր համաձայնությունը: Ընդհանուր բյուջեի տասը տոկոսը (10%) գերազանցող գումարի կամ ենթադրամաշնորհի նպատակի փոփոխությունները պետք է կատարվեն ենթադրամաշնորհային համաձայնագրի երկկողմ հաստատված գրավոր փոփոխությունների տեսքով: Բյուջեի տրամադրման կարգավորումները նախատեսված են ԻՀԱ դրամաշնորհային քաղաքականության 5-րդ գլխում:

6. Հայտերի գնահատումը և ընտրության չափանիշները

Հայտերի գնահատումը և ընտրության չափանիշները ներկայացված են ԻՀԱ-ի գնումների քաղաքականության 2-րդ հավելվածով, որը վերաբերում է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում տրամադրվող ենթադրամաշնորհների ընթացակարգին:

7. Ենթադրամաշնորհային հայտի ներկայացման կարգը

Բոլոր հետաքրքրված ՔՀԿ-ներին և ԶԼՄ-ներին, որոնք համապատասխանում են սույն հայտարարությամբ ներկայացված պահանջներին, հրավիրում ենք մասնակցելու սույն մրցույթին՝ լրացնելով սույն հայտին կցված ձևաթուղթը:

Ենթադրամաշնորհային հայտին կից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը.

- Ենթադրամաշնորհային ծրագրին դիմող ՔՀԿ-ի և ԶԼՄ-ի (կոնսորցիումի դեպքում՝ բոլոր անդամ ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների) կանոնադրության պատճենը:
- Ենթադրամաշնորհային ծրագրին դիմող ՔՀԿ-ի (կոնսորցիումի դեպքում՝ բոլոր անդամ ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների) պետական գրանցման վկայականի պատճենը՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները,
- Յուրաքանչյուր դիմող կազմակերպության մասին հակիրճ (առավելագույնը մեկ էջ) նկարագրություն:
- Ղեկավարող կազմակերպության (հիմնական հայտատուի) հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը, եթե ներառված չէ պետական գրանցման վկայականում:
- Տեղեկանք բանկից՝ ղեկավարող կազմակերպության բանկային հաշվի առկայության մասին:
- Եթե ենթադրամաշնորհային ծրագրի ղեկավարը ՔՀԿ-ի/ԶԼՄ-ի ղեկավարը չէ, ապա ՔՀԿ-ի/ԶԼՄ-ի ղեկավարի կողմից ծրագրի ղեկավարին տրված լիազորագիրը:
- Ենթադրամաշնորհային ծրագրի իրականացնող թիմի հիմնական անդամների ինքնակենսագրականները:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

- Կոնսորցիումի դեպքում՝ պարտավորագիր-նամակներ կոնսորցիումի անդամների կողմից կամ համագործակցության համաձայնագիր՝ ենթադրամաշնորհային ծրագրի համատեղ իրականացման մասին:
- «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների հմտությունների զարգացմանն ուղղված ուսումնական ծրագիրը ավարտելու հավաստագրի պատճենը:
- Գրավոր հավաստում այն մասին, որ Դիմորդը, իսկ կոնսորցիումով դիմելու դեպքում՝ Կոնսորցիումը դիմելու է նաև բյուջետային ոլորտի երիտասարդ մասնագետներին աշխատանքային հիմունքներով ՔՀԿ-ում/ԶԼՄ-ում ներգրավելու նպատակով հայտարարված ենթադրամաշնորհային ծրագրին:

Բոլոր փաստաթղթերը հարկավոր է ներկայացնել հայերեն լեզվով: Անհրաժեշտության դեպքում ենթադրամաշնորհային հանձնաժողովը դիմողներից կարող է պահանջել հավելյալ փաստաթղթեր, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

8. Ժամկետը

Ենթադրամաշնորհային ծրագրերի տևողությունը պետք է լինի 6 (վեց) ամիս:

9. Այլ պահանջներ

Ենթադրամաշնորհային հայտի ձևը, հավելվածները և կից փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն Ծրագիրը ղեկավարող կազմակերպության ղեկավարի կողմից և կնքված լինեն տվյալ ՔՀԿ-ի/ԶԼՄ-ի կնիքով:

Ամբողջական հայտն ու կից փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով անհրաժեշտ է ուղարկել info@armla.am էլեկտրոնային փոստի հասցեով՝ նամակի վերնագիրն անվանելով՝ **«ՔՀԿ-ների/ԶԼՄ-ների շահերի պաշտպանության ենթադրամաշնորհային հայտ»**:

<u>Ուշադրություն. առձեռն ներկայացված հայտերը չեն դիտարկվի:</u>

Սույն փուլի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է **2026թ. փետրվարի 23-ը, ժամը 18:00-ը**: Ներկայացված հայտը և կից փաստաթղթերը հետ չեն վերադարձվի հայտատուին՝ անկախ այն հանգամանքից՝ հայտը ընդունվել է, թե ոչ: Պահանջվում է ուղարկել փաստաթղթերի միայն մեկ փաթեթ:

Ենթադրամաշնորհների հետ կապված բոլոր հարցերը լուծվում են՝ ԻՀԱ դրամաշնորհների տրամադրման քաղաքականության համաձայն:

Ենթադրամաշնորհի տրամադրման վերաբերյալ որոշումները կընդունվեն **մինչև 2026թ. մարտի 9-ը:** Հաղթողների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի Ծրագրի կայքում՝ https://budgets.am/:

Ենթադրամաշնորհների իրականացման սկիզբը **2026թ.-ի մարտի 16-ն է:**

Ծրագրային առաջարկի վերաբերյալ հարցեր կամ պարզաբանումներ ունենալու դեպքում, դրանք կարող եք գրավոր կարգով ներկայացնել info@armla.am հասցեին, որոնք կամփոփվեն և պատասխանները կներկայացվեն իրազեկման (տեղեկատվական) հանդիպման ընթացքում:

Տեխնիկական հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել Ծրագրի դրամաշնորհների համակարգող Արտակ Սարիբեկյանի հետ՝ զանգահարելով +37410 540199 հեռախոսահամարով, կամ էլեկտրոնային նամակով՝ info@armla.am հասցեով:

10. Իրազեկման հանդիպումներ

Սույն հայտարարությամբ նախատեսված ենթադրամաշնորհների մասին ՔՀԿ-ներին/ՋԼՄ-ներին իրազեկելու նպատակով Ծրագրի կողմից կազմակերպվելու է իրազեկման (տեղեկատվական) առցանց հանդիպում, որին մասնակցելու և գրանցվելու վերաբերյալ հայտարարությունը կտեղադրվի Ծրագրի կայքում[8] և Ֆեյսբուքյան հարթակում[9]:

Ծանոթություն 7.
Հայտարարության մեջ նշված ժամկետները և պայմանները անհրաժեշտության դեպքում կարող են փոփոխվել: Փոփոխությունների դեպքում տեղեկատվությունը կհրապարակվի Ծրագրի կայքում::

Ուշադրություն.

Այն հայտերը, որոնք կներկայացվեն սահմանված ժամկետից ուշ և/կամ չեն ընդգրկի պահանջվող ամբողջ տեղեկատվությունը կամ չեն բավարարի Ծրագրի պայմաններին, չեն դիտարկվի:

Սույն հայտարարությանը կից փաստաթղթերը.

1. ԻՀԱ դրամաշնորհների տրամադրման քաղաքականություն,
2. Ենթադրամաշնորհային առաջարկի հայտի ձև,
3. Հավելված 1. Ծրագրի տրամաբանական կառուցվածք,
4. Հավելված 2. Ծրագրի բյուջե:

[8] https://budgets.am/
[9] https://www.facebook.com/profile.php?id=100090358352230